ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 55

17 հունիսի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (միջնակարգ ընդհանուր կրթություն ) և տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից «50.0» հազար դրամ որպես համայնքային ներդրում հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անիպեմզայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ ուսուցիչների և աշակերտների էքսկուրսիան դեպի Երևան կազմակերպելու համար, «100.0» հազար դրամ՝ «Ջրափիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ դպրոցի տարածքում կառուցվող «Հավերժության պուրակ»-ում տեղադրվող խաչքարի և ցայտաղբյուրի տեղադրման հետ կապված ծախսերը հոգալու համար, 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից «200.0» հազար դրամ հատկացնել «Հայկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ դպրոցի տանիքը նորոգելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ -12 Դեմ՝-0 Ձեռնպահ՝-1

Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ա. ԱՐՍԵՆՅԱՆ

**Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

**Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Գ.ՂԶՐՈՅԱՆ

**Բ. ՄԵԼԻՔՅԱՆ**

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

Ա. ՆԻԿՈՅԱՆ

**Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ**

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

**Զ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Ա.ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թվականի հունիսի 17
Քաղաք Մարալիկ